Արձանագրություն N 2

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով թիվ ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2024/7Շ ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

Մեկնարկ՝ «05» «ապրիլի» 2024թ.
Ժամը՝ 12:00
Ավարտ՝ «11» «ապրիլի» 2024թ.
Ժամը՝ 11:00

ք. Երևան

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան՝ (ԳՊ/ԳԱՊ)՝ Ա. Ավագյան

անդամներ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Մ. Ստեփանյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)՝ Լ. Զաքարյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի պայմանագրերի կառավարման մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)՝ Մ. Մալխասյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Ա. Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմակերպչական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)՝ Ա. Բաղալյան

1. Տեղեկատվություն՝ ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2024/7Շ ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 **ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2024/7Շ** ծածկագրով բաց մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են **2024 թվականի ապրիլի 5-ին՝ ժամը՝ 12:00-ին:**

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք աշխատանքների գների վերաբերյալ

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքների գները /գնվելիք աշխատանքների կատարման համար գնման հայտով սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը/՝ մեկ թվով արտահայտված.

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	գնվելիք աշխատանքների կատարման համար գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/
1	Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ80+000-կմ94+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ	**3 128 714 481**

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և էլեկտրոնային հասցեների հրապարակում

3.1. Հայտեր են ներկայացվել հետևյալ մասնակիցների կողմից

N	Մասնակիցների անվանումները	էլ.փոստ
1	«Վասպուրականի ՃՇՇ» ՍՊԸ	vaspurakanjshsh@gmail.com
2	«Շանթ-Սեյրան» ՍՊԸ	shantseyran@mail.ru
3	«ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ	vardangroup@mail.ru

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և այն վերսկսել 2024 թվականի ապրիլի 11-ին 11:00-ին:

11. 04.2024 թվականին, ժամը 11:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

4. Տեղեկատվություն՝ բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

4.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

5. Տեղեկատվություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

5.1 Գնային առաջարկներ են ներկայացվել հետևյալ մասնակիցներ կողմից՝

Չափաբաժին 1՝ Մ-10, Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ80+000-կմ94+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքներ

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	«Շանթ-Սեյրան» ՍՊԸ	1 822 500 000	364 500 000	2 187 000 000
2	«Վասպուրականի ՃՇՇ» ՍՊԸ	1 933 335 000	386 667 000	2 320 002 000
3	«ՎՄՎ ՔԱՄՓՆԻ» ՍՊԸ	2 190 740 000	438 148 000	2 628 888 000

5.2 Մասնակիցների հայտերի հաշվարկման ճշգրտությունը (տառերով, հայտում ներկայացված հայտերի համարներին արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկի թվաբանական ճշգրտությունը համապատասխանում են (ճիշտ են):

6. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՏԿԵՆ-ԲՄԱՇՁԲ-2024/7Շ ծածկագրով բաց մրցույթի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

6.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ընտրված մասնակից ճանաչել «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ին:

6.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

6.3 Հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ին:

7. Տեղեկատվություն՝ կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

7.1 Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

8. Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

8.1 Մասնակիցների կողմից հրավերի վերաբերյալ կատարվել են հարցումներ, մասնավորապես՝

- 20.03.2024թ.-ին armeps համակարգի միջոցով ներկայացված հրավերի պարզաբանման հարցումը վերաբերում էր Հրավերում ներառված ծավալաթերթի VII բաժնին, մասնավորապես՝ «Ճանապարհի կահավորում/ Дорожные знаки, ограждение» Արգելափակոցներ Ограждения «2. Նոր մետաղական արգելափակոցների տեղադրում /ներառյալ աշխատանքը/ հեծան, 4մմ հաստ.այդ թվում»՝-7564 գծմ՝ տողի նշված արգելափակոցները մետաղական են, թե ցինկապատ: Հարցադրմանն ի պատասխան 21.03.2024 թ.-ին տրվել է պարզաբանում այն մասին, որ արգելափակոցները մետաղական են:
- 22.03.2024թ.-ին armeps համակարգի միջոցով ներկայացված հրավերի պարզաբանման հարցումը վերաբերում էր գնման ընթացակարգի Հրավերում ներառված Ծավալաթերթ-նախահաշվի Excel տարբերակը հրապարակելուն: Հարցադրմանն ի պատասխան 22.03.2024թ.-ին տրվել է պարզաբանում այն մասին, որ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ կետի՝ Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից, միաժամանակ հայտնում ենք, որ ղեկավարվելով ՀՀ

կառավարության կողմից 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների կազմակերպման» կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության՝ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը չի ներկայացնում իր կողմից լրացված ծավալաթերթ-նախահաշիվ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Ա. Ավագյան**	.....
Հանձնաժողովի անդամներ՝	**Մ. Ստեփանյան**	.....
	Լ. Զաքարյան	.....
	Մ. Մալխասյան	.....
	Ա. Խաչատրյան	.....
Քարտուղար՝	**Ա. Բաղալյան**	.....